

Մ Ա Ս II

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՄԱՍ II-Ա

Մակրոտնտեսական կանխատեսումներ և վերլուծություն

3.1 Ներածություն

Տարեկան բյուջետային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև 2011 թվականի մակրոտնտեսական հեռանկարները:

Տնտեսական կանխատեսումների նպատակը

Հայաստանի տնտեսության իրավիճակի կանխատեսումները կարևոր են մի քանի պատճառներով: Նախ՝ տնտեսական աճ ապահովող արդյունավետ տնտեսության առկայությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եկամուտների ավելացումը ինքնին շատ կարևոր նպատակ են Հայաստանի Հանրապետության կառավարության համար: Այդ նպատակները նաև Կառավարության Գործունեության Ծրագրի բաղադրիչներն են: Մակրոտնտեսական կանխատեսումները ոչ միայն տեղեկատվություն են տալիս, թե ինչ աստիճանով են վերը նշված նպատակները իրագործվելու, այլ նաև ապահովում են ընդհանուր միջավայրի վերաբերյալ պատկերացումներ, ինչը կարևոր է կառավարության ռազմավարության և քաղաքականության այլ ասպեկտների ձևավորման համար: Այլ կերպ ասած մակրոտնտեսական կանխատեսումները հիմք են տալիս պատկերացում ունենալ այն իրական միջավայրի մասին, որի պայմաններում գործելու է կառավարությունը: Ընդ որում, մակրոտնտեսական ապագա զարգացումների համատեքստում է ուրվագծվում կառավարության քաղաքականության հակացիկլիկ բնույթը: Ընդունված կանոն է, որ տնտեսական անկումների ժամանակ հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է լինի ընդլայնող՝ պակասուրդի մեծացման

միջոցով ավելի շատ ծախսերի իրականացում քան եկամուտների հավաքագրում և հակառակ վարքագիծը՝ տնտեսական վերելքների ժամանակահատվածում:

Տնտեսական կանխատեսումների իրականացման երկրորդ կարևոր հիմնավորումն այն է, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին կառավարության համար ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Տնտեսության նկարագրություն

Տնտեսությունը կարելի է նկարագրել հետևյալ վեց հիմնական ասպեկտներով.

- Համախառն առաջարկ (չափվում է, տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքներով, իսկ վերջիններիս իրական աճերը բնութագրում են համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճը),
- Համախառն պահանջարկ (չափվում է, պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ),
- Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլյատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը և գնաձ, որը չափվում է սպառողական գների (ներառյալ սպառողական ներմուծված ապրանքների գները) ինդեքսի փոփոխությամբ (ՄԳԻ)),
- Ֆինանսական համակարգի խորություն (չափվում է հետևյալ փոփոխականներով՝ Փողի ազդեցատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ, ցույց է տալիս թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),

- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով և դրա տարբերով՝ արտահանում, ներմուծում, տրանսֆերտներ, գործոնային եկամուտներ),

- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի, եկամուտների ծավալով և դրանց տարբերությամբ, պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ, պակասուրդ (հավելուրդ)/ՀՆԱ):

Աղյուսակ 3.1-ում ներկայացված է տնտեսության ներկա իրավիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ վերը նշված վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների: ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 3.1-ում նշված ցուցանիշերը և տնտեսության զարգացման հեռանկարները:

Աղյուսակ 3.1 ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ

Չափորոշիչ	2007	2008	2009	2010 7 ամիս	2010	2011
	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Ծրագիր	Կանխատեսում
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	13.7	6.9	-14.2	4.0	2.7	4.6
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ %)	37.8	40.9	33.8	23.0*	31.2	31.1
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ %)	81.8	81.8	93.9	107.0*	95.1	95.4
ՀՆԱ դեֆլյատոր	104.2	105.9	101.3	109.6	108.9	103.6
Գնաձևիջին	4.4	9.0	3.4	7.4	7.6	5.7
Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ %	-0.7	-0.7	-7.7	-	-4.8	-3.9
Բանկային համակարգի ներգրավվածություն (փողի զանգված/ՀՆԱ %)	22	19.8	26.3	-	24.2	24.6
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ %	-6.4	-11.8	-16.0	-	-14.8	-13.1

* Ներկայացված ցուցանիշների փաստացի արդյունքները հրապարակված չեն և ներկայացվում են ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականները:

3.2 Համախառն առաջարկ

Ինչպես արդեն նշել ենք, երկրում համախառն առաջարկն իրական արտահայտությամբ չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով, որի փոփոխությունն էլ նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագա ակնկալվող զարգացումները:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունը բնութագրվել է տնտեսական աճի բարձր ցուցանիշներով, մասնավորապես՝ 2006-2008 թվականներին միջինում գրանցվել է 11.3 տոկոս համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճ: 2006-2008 թվականների տնտեսական աճին հիմնականում նպաստել են շինարարությունը՝ միջինում 4.8 և ծառայությունները՝ միջինում 3.5 տոկոսային կետերով: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով 2008 թվականի չորրորդ եռամսյակից նկատելի դարձավ տնտեսական աճի տեմպերի նվազում, իսկ 2009 թվականին արձանագրվեց 14.2 տոկոս տնտեսական անկում:

2010 թվականի տարեսկզբից արձանագրվել է տնտեսական վերելք՝ հունվար-օգոստոսին ամիսներին ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 3.1 տոկոս: Նշված ցուցանիշը՝ կրելով նաև կառավարության հակաճգնաժամային միջոցառումների փաթեթի ազդեցությունը, ծրագրվածից բարձր է արձանագրվել:

2010 թվականի առաջին ութ ամիսների ընթացքում տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում աճ է գրանցվել, բացի գյուղատնտեսությունից և փոքր-ինչ նաև շինարարությունից: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 2.1 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 4.4 տոկոս, արդյունաբերության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.4 տոկոսը՝ 9.3 տոկոս իրական աճի պայմաններում: Շինարարությունը ևս իրական աճ է արձանագրել 7.5 տոկոսի չափով՝ 0.9 տոկոսային կետով նպաստելով տնտեսական աճին: Գյուղատնտեսությունը նվազել է 22.6 տոկոսով և 2.8 տոկոսային կետով բացասական նպաստում է ունեցել տնտեսական աճին:


Կանխատեսում: 2010 թվականի արդյունքներով սպասվում է շուրջ 2.7 տոկոս տնտեսական աճ, բյուջեի հիմքում դրված 1.2 տոկոսի դիմաց: Ակնկալվում է, որ այլ հավասար

պայմաններում համաշխարհային տնտեսությունում կգրանցվի շարունակական աճ և գլոբալ պահանջարկի մեծացում նախորդ 2009 թվականի համեմատ: Մետաղների միջազգային գները համեստ աճի միտում կդրսևորեն՝ կայունանալով 2011 թվականից, կվերականգնվեն նաև արտերկից եկող դրամական փոխանցումները՝ հիմնականում պայմանավորված Ռուսաստանի տնտեսության ակնկալվող դրական զարգացումներով: Արդյունքում 2011 թվականի համար իրական ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է 4.6 տոկոսի չափով: Ընդ որում, արդյունաբերությունը կաճի 4.6 տոկոսով, գյուղատնտեսությունը 10 տոկոսով, շինարարությունը 2 տոկոսով, ծառայությունները 3.9 տոկոսով և զուտ անուղղակի հարկերը 4 տոկոսով:

Աղյուսակ 3.2.1. Տնտեսության ճյուղերի իրական աճերը 2006-2011թթ (ավելացված արժեքով)

	2006	2007	2008	2009	2010 հունվար հուլիս	2010	2011
	փաստ.	փաստ.	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	Կանխ.
Արդյունաբերություն	-2.5	2.8	2.1	-7.9	9.3	6.6	4.6
Գյուղատնտեսություն	0.5	10.4	3.3	-0.1	-22.6	-14.0	10
Շինարարություն	37.7	18.2	11.3	-42.3	7.5	1.7	2.0
Ծառայություններ	16.0	12.5	4.8	-0.1	4.4	4.0	3.9
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	14.9	35.9	17.1	-20.7	19.6	20.0	4.0
Ընդամենը ՀՆԱ	13.2	13.7	6.9	-14.2	4.0	2.7	4.6

Գծապատկեր 3.2.1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող իրական աճին նպաստման չափերը:



3.2.1 Արդյունաբերություն

Աղյուսակ 3.2.1-ից նկատելի է, որ 2006-2008 թվականների արդյունաբերության ճյուղի իրական աճի ցուցանիշն ամենացածրն է եղել և ճյուղում միջին հաշվով գրանցվել է 0.8 տոկոս աճ, ինչը բացատրվում է հիմնականում այդ տարիներին արդյունաբերության որոշ ենթաճյուղերի համար (բացառությամբ մետալուրգիայի) անբարենպաստ գնային դաշտի ձևավորմամբ՝ ի դեմս արժևորվող իրական փոխարժեքի, ինչպես նաև նշված գնային անբարենպաստ միջավայրը փոխհատուցող այս ոլորտում իրականացվող ոչ բավարար ներդրումների: 2009 թվականի տարեսկզբին ճյուղը զգալի անկում ունեցավ համաշխարհային պահանջարկի, մետաղների գների և ներքին պահանջարկի անկմամբ պայմանավորված, իսկ տարվա երկրորդ կեսին՝ միջազգային շուկայում մետաղների գների աճի և կառավարության համակարգված հակացիկլիկ քաղաքականության արդյունքում, արդյունաբերությունն աստիճանաբար վերականգնվել է: 2010 թվականի հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի համախառն թողարկման ծավալների 11.4 տոկոս աճ: Երկնիշ աճեր են գրանցվել հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման (34.2%) ճյուղում, մշակող արդյունաբերության ոսկերչական արտադրատեսակների արտադրության (57.6%), քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրության (39%), համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրության (24.9տոկոս), դեղագործական արտադրանքի արտադրության (23.6%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (19.4%), խմիչքների արտադրության (18.0%) ենթաճյուղերում: Արդյունաբերության համախառն թողարկման 11.4 տոկոս աճին ամենամեծ նպաստումն է ունեցել հանքագործական արդյունաբերությունը (3.9 տոկոսային կետ¹), իսկ մշակող արդյունաբերության ենթաճյուղերից սննդամթերքի արտադրությունը (2.4 տոկոսային կետ) և շինանյութերի արտադրությունը (1.2 տոկոսային կետ):

Կանխատեսում: Ակնկալվում է, որ արդյունաբերության ճյուղում 2010թ-ի տարեկան աճը կկազմի 6.6 տոկոս՝ պայմանավորված ինչպես կառավարության արդյունաբերական ձեռնարկություններին օժանդակման հակաճգնաժամային գործողություններով այնպես էլ համաշխարհային պահանջարկի և հումքային ապրանքների գների վերականգնմամբ: 2011 թվականին աճի միտումն այս ճյուղում կպահպանվի 4.6 տոկոս մակարդակի շուրջ: Նշված

¹ Նպաստման չափերը ՀՀ ՖՆ գնահատականներն են:

ցուցանիշի ձևավորմանը նպաստավոր ազդեցություն է ունենալու 2009թ-ից սկսված այս ճյուղում ներդրումների խրախուսմանը միտված կառավարության հարկային քաղաքականությունը², ինչպես նաև ակնկալվող արտաքին պահանջարկի շարունակական վերականգնումը:

3.2.2 Գյուղատնտեսություն

2006-2008 թվականներին գյուղատնտեսության իրական աճը կազմել է միջինում 4.7 տոկոս: 2009 թվականին տնտեսության այս ճյուղն աննշան 0.1 տոկոս անկում է ունեցել, սակայն 2010 թվականի հունվար-հուլիսին գյուղատնտեսության համախառն թողարկման ծավալները իրական արտահայտությամբ նվազել է՝ 22.6 տոկոսով: Գյուղատնտեսության նշված անկումը պայմանավորված է եղել գերազանցապես անբարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում բուսաբուծության ենթաճյուղի անկմամբ: Մասնավորապես բուսաբուծության համախառն թողարկման ծավալները նշված ժամանակահատվածում նվազել են 41.2 տոկոսով: Անասնաբուծությունը և ձկնորսությունը ևս նվազել են համապատասխանաբար 4.7 և 6.5 տոկոսներով: Ընդ որում, անասնաբուծության ենթաճյուղում նվազել են սպանդի համար իրացված անասունի և թռչնի ծավալը 6.3 տոկոսով և կաթի արտադրությունը 6 տոկոսով, մինչդեռ ձվի արտադրությունը բնութագրվում է երկնիշ՝ 27.5 տոկոս աճով:

Կանխատեսում: Մինչև տարեվերջ ակնկալվում է, որ գյուղատնտեսության իրական անկումը կմեղմվի երրորդ եռամսյակի ընթացքում ակնկալվող դրական զարգացումների հաշվին՝ տարվա արդյունքներով գյուղատնտեսության իրական անկումը կկազմի շուրջ 14 տոկոս: 2011 թվականին կանխատեսվում է գյուղատնտեսության աստիճանական վերականգնում՝ ճյուղի աճը կկազմի առնվազն 10 տոկոս: Կանխատեսման համար հիմք են հանդիսացել ճյուղի զարգացման նախորդ տարիներին դրսևորված միտումները:

3.2.3 Ծինարարություն


Ծինարարության ճյուղը 2006-2008 թվականներին ունեցել է առաջանցիկ աճի տեմպ ՀՆԱ-ի նկատմամբ՝ միջին հաշվով ապահովելով շուրջ 22 տոկոս իրական աճ: Այսինքն, այն հանդիսացել է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը: 2009 թվականին նույնչափ մեծ արագությամբ տնտեսության այս ճյուղը գահավիժեց՝ արձանագրելով 42.3 տոկոս իրական

² Ներմուծվող սարքավորումների և արտադրական հոսքազների համար վճարման ենթակա ԱԱՀ-ն հետաձգվում է: Միննույն ժամանակ 2009 թվականից կառավարությունը ներդրումների խրախուսման քաղաքականություն է վարում, ինչպես նաև վարկեր են տրամադրվում արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերական ձեռնարկություններին:

անկում: 2010 թվականին ճյուղի զարգացումը նորից ընկավ հունի մեջ. Ընդ որում, ի տարբերություն ճյուղի մինչճգնաժամային կառուցվածքի, որտեղ ճյուղում ստեղծվող ավելացված արժեքի զգալի մասը ոչ արտադրողական բնույթի ներդրումներն էին՝ բնակարանաշինությունը, 2010թ-ի յոթ ամիսներով արդեն իսկ ճյուղի այս հատվածին բաժին էր ընկնում ընդհանուր ավելցված արժեքի 30 տոկոսը՝ մինչճգնաժամային ցուցանիշի 63.5-ի փոխարեն: Տարվա յոթ ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել են կազմակերպությունների (54.2 տոկոս), մարդասիրական օգնության (5.3 անգամ), պետական բյուջեի (25.9 տոկոս) և համայնքների (2.2 անգամ) միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները: Մինչդեռ բնակչության և միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալները նվազել են՝ մասնավորապես, բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարությունը իրական արտահայտությամբ նվազել է 57.7 տոկոսով՝ շարունակելով նախորդ տարվա ընթացքում դրսևորած անկման միտումը, իսկ միջազգային վարկերի հաշվին իրականացված շինարարությունը նվազել է 23.6 տոկոսով:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված կապիտալ շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 15.1 տոկոս և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 17.0 տոկոսային կետով, իսկ կազմակերպությունների միջոցները կազմել են 48.6 տոկոս և դրանց հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են 14.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 3.2.2 Շինարարության կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



Շինարարության կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի ևս որոշակի փոփոխության է ենթարկվել: Եթե նախորդ տարիներին գերակշռող էին անշարժ գույքի հետ կապված գործառնություններին ուղղվող միջոցները, ապա 2010 թվականի յոթ ամիսները նախորդ տարիների նույն ժամանակահատվածի հետ համեմատելիս նկատում ենք, որ նշված ենթաճյուղին ուղղվող միջոցների մասնաբաժինը կրճատվել է և դրա փոխարեն աճում են տնտեսության մյուս ճյուղերին, հատկապես էներգետիկային, տրանսպորտին ու կապին ուղղվող միջոցները:

Չնայած վերը նշված կառուցվածքային տեղաշարժերի, շինարարության միջոցներն ըստ ճյուղերի շարունակվում է հիմնականում ուղղվել անշարժ գույքի հետ կապված գործունեությանը 24.5 տոկոս: Ուղղվող միջոցների մնացած մասը բաշխվում է հետևյալ ուղղություններով՝ էլեկտրականության, գազի, ջրի մատակարարման ճյուղին՝ 16.9 տոկոս և տեղեկատվության և կապի ճյուղին՝ 15.6 տոկոս, տրանսպորտի ճյուղին՝ (9.5%), մշակող արդյունաբերությանը (8.0 տոկոս), ինչպես նաև գյուղատնտեսությունը (7.8%):

Կանխատեսում: Ակնկալվում է, որ շինարարության ճյուղի իրական աճը 2010 թվականին կկազմի շուրջ 1.7 տոկոս: 2011 թվականին ճյուղը կաճի շուրջ 2.0 տոկոսով՝ ճյուղի վերականգնումը 2011 թվականին կլինի աստիճանական՝ պայմանավորված տնտեսության կառուցվածքային փոփոխություններով: Ճյուղի աճի նման վարքագծի կանխատեսումը

պայմանավորված է կապիտալ շինարարության ճյուղի յուրահատկությամբ, այն է՝ ճյուղի զգալի անկումը 2009թ-ին գուգորդվեց անշարժ գույքի գների անկմամբ, հետևաբար հետագա վերականգնումը պետք է լինի կամ նշյալ գների շրջադարձային աճով՝ խթաններ ստեղծելով նորից ներդրումներ կատարել բնակարանային շինարարությունում, ինչն ի դեպ քիչ հավանական սցենար է, կամ ճյուղի կառուցվածքային տեղաշարժերով՝ պայմանավորված տնտեսության այլ հատվածների վարքագծերով, որը ժամանակատար շարունակական պրոցես է:


3.2.4 Ծառայություններ և առևտուր

2006-2008 թվականներին ծառայությունների ոլորտի միջին իրական աճը կազմել է 11.1 տոկոս և վերջինս ունեցել է ՀՆԱ-ի աճի տեմպը գերազանցող աճի միտում: 2009 թվականի ճգնաժամի պայմաններում տնտեսության այս ճյուղը աննշան անկում ունեցավ՝ 0.1 տոկոս: 2010 թվականի անցած ամիսների տվյալներով այս ճյուղը եղել է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերից մեկը: 2010 թվականի հունվար-հուլիս ամիսներին մատուցված ծառայությունների ծավալը 2009 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ համադրելի գներով աճել է 6.1 տոկոսով: Մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում տեղեկատվության և կապի (25.2%), ֆինանսական և ապահովագրական գուծունեության (21.5%) և տրանսպորտի (20.4%) ծառայությունները, ինչպես նաև մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության (6.0%), կրթության (5.1%) ծառայությունները, որոնցից ամենամեծ նպաստումն են ունեցել ֆինանսական միջնորդության, տեղեկատվության և կապի ծառայությունները:

2010 թվականի հունվար-հուլիս ամիսներին առևտրի շրջանառությունը 2009 թվականի համապատասխան ժամանակահատվածի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 4.1 տոկոսով, որտեղ մեծաձայն առևտուրը և ավտոմեքենաների առևտուրը աճել են համապատասխանաբար 11.4 և 22.9 տոկոսով:

Կանխատեսում: 2010 թվականին մինչև տարեվերջ կանխատեսվում է, որ ճյուղի ավելացված արժեքի աճը կկազմի շուրջ 4.0 տոկոս ճյուղը ճգնաժամային ժամանակահատվածում ցուցաբերել է բարձր դիմադրողականություն, որով էլ պայմանավորված կանխատեսվում է վերջինիս ՀՆԱ-ի աճին համահունչ կայուն զարգացում: 2011 թվականին պայմանավորված տնտեսության այլ ճյուղերի զարգացումներով, ինչպես նաև նշյալ ճյուղերը սպասարկող ծառայությունների համահունչ վարքագծով, ճյուղի աճը կկազմի շուրջ 3.9 տոկոս:

Գծապատկեր 3.2.3 Ոլորտների տեսակարար կշիռները 2010 թվականի ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքում



Աշխատանքի շուկա: 2006-2008 թվականներին գործազրկության մակարդակը տնտեսական բարձր աճով պայմանավորված անկման միտում է դրսևորել: Սակայն, 2009 թվականից աճել է՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով: 2010 թվականի անցած յոթ ամիսներին գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 0.3 տոկոսային կետով և կազմել 7.1 տոկոս³ (84.6 հազ.մարդ), որը նվազման միտում ունի (տարեսկզբի համեմատ նվազել է 0.1%-ով): 2010 թվականի հունվար-հուլիսին միջին զբաղվածների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ պայմանավորված տնտեսության աշխուժացմամբ, աճել է 0.6 տոկոսով՝ կազմելով 1106.3 հազ. մարդ:

2010 թվականի հունվար-հուլիսին միջին ամսական անվանական աշխատավարձը 2009 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 8.6 տոկոսով, ինչը պայմանավորված է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի աշխուժացմամբ (բացառությամբ գյուղատնտեսության), ինչպես նաև վարչարարության հետևանքով թաքնված աշխատավարձերի գրանցմամբ: Նախորդ տարվա ընթացքում, կառավարության ընդլայնողական քաղաքականությամբ պայմանավորված, բյուջետային հատվածի աշխատավարձի աճն առաջանցիկ էր մասնավոր հատվածի նկատմամբ, մինչդեռ 2010 թվականի հունվար-հուլիս

³ Նշվածը պայմանավորված է աշխատաշուկայի տնտեսության արձագանքման լագով:

ամիսներին ոչ պետական հատվածի աշխատավարձի աճը (11.0%) գերազանցել է պետական հատվածում աշխատավարձի աճին (4.4%): Ընթացիկ տարվա անցած յոթ ամիսներին տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է համապատասխանաբար՝ 85335 և 134486 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 106232 դրամ:

2010 թվականի հունվար-հուլիսին իրական աշխատավարձը 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.1 տոկոսով:

ՀՆԱ-ի 4.0 տոկոս աճի պայմաններում զբաղվածության աճը կազմել է 0.6 տոկոս, որը վկայում է 2010 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխատանքի արտադրողականության աճի մասին (6.5 տոկոս):

Գանիատեսուի: 2011 թվականի տնտեսական ակտիվության աճին զուգընթաց կանխատեսվում է գործազրկության մակարդակի աստիճանական նվազում 2010 թվականի համեմատ, ընդ որում, քանի որ 2011թ-ի տնտեսական աճին զգալի նպաստում կունենա գյուղատնտեսության աճը, որտեղ աճը կլինի զբաղվածության հաշվին, հետևաբար ակնկալվում է որ տնտեսական աճի զգալի մասը կապահովի նոր աշխատողների ներգրավման հաշվին: Այնուամենայնիվ, մյուս կողմից հաշվի առնելով տնտեսության մնացած ճյուղերի արտադրողականության աճի հնարավոր պոտենցիալը, ակնկալվում է որ տնտեսության զարգացումը կկլանի բնակչության զբաղվածությունը այնպես, որ ապահովվի նաև արտադրողականության աճ՝ պայմանավորված ՀՆԱ-ի առաջանցիկ աճով:

Աղյուսակ 3.3.1 Գործազրկության մակարդակի դինամիկան 2006-2011 թթ

	2007	2008	2009	2010թ. հունվար-հուլիս	2010	2011
Գործազրկության մակարդակ	7.0	6.3	6.9	7.1	6.8	6.5

3.3 Համախառն պահանջարկ

Համախառն պահանջարկը հիմնականում պատկերացում է տալիս տնտեսությունում ստեղծված եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն

է տալիս, թե ձևավորված եկամուտներն ուղղակի սպառմանն են ուղղվելու, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հաստատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման բաղադրիչներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից մեր ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին, որը բնութագրվում է գուտ արտահանման ցուցանիշով:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Սպառում: 2006-2008 թվականների ընթացքում սպառումը միջին հաշվով աճել է 8.6 տոկոսով, իսկ իրական ՀՆԱ-ն՝ 11.3 տոկոսով: Ընդ որում, պետական սպառումը միջին հաշվով աճել է 5.8 տոկոսով, իսկ մասնավոր սպառումը՝ 9.0 տոկոսով: Ճգնաժամային՝ 2009 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ նվազել է ընդամենը 2.6 տոկոսով, 14.2 տոկոս տնտեսական անկման պայմաններում: Տնտեսական ճգնաժամի տարում սպառման անկումը էապես փոքր էր՝ ՀՆԱ-ի բարձր անկման համեմատությամբ, ինչը պայմանավորված է հարստության էֆֆեկտով, համաձայն որի տնօրինվող եկամտի նվազման դեպքում սպառման վարքագիծը եկամուտներին համարժեք չի կրճատվում՝ ի հաշիվ նախորդ տարիների ընթացքում ձևավորված խնայողությունների: 2010 թվականին սպառումը դրսևորելու է առաջանցիկ աճ ՀՆԱ-ի աճի համեմատ: Մասնավորապես տարվա առաջին եռամսյակի տվյալներով ՀՆԱ-ի 5.4 տոկոս աճին համապատասխանել է սպառման 8.4 տոկոս աճ, իսկ տարվա յոթ ամիսների գնահատականներով սպառման աճը կազմել է շուրջ 4.5 տոկոս՝ ՀՆԱ-ի 4 տոկոս աճի պայմաններում: Ընդ որում պետական սպառումն աճել է 0.7 տոկոսով, մասնավոր սպառումը 5.6 տոկոսով:

Կանխատեսում: Մինչև տարեվերջ ՀՆԱ-ի կանխատեսված 2.7 տոկոս աճի պարագայում կունենանք սպառման աճ 4.0 տոկոսի չափով: Ընդ որում 2010 թվականին սպառման աճի տեմպը առաջանցիկ է ՀՆԱ-ից, որն ըստ էության կոչված է փոխհատուցելու ճգնաժամային իրավիճակում կրճատված սպառման մակարդակը: Մինչդեռ 2011 թվականին բնակչության

եկամուտների աճն ավելի շատ կուղղվի ներդրումներին և սպառման իրական աճը կզիջի ՀՆԱ-ի աճին՝ կազմելով շուրջ 3.5 տոկոս⁴:

Կապիտալ ներդրումներ: Կապիտալ ներդրումների մասով նշենք, որ 2006-2008 թվականների ընթացքում կապիտալ ներդրումները միջին հաշվով աճել են 21.5 տոկոսով: Սակայն, 2009 թվականին իրական կապիտալ ներդրումները կրճատվել են 34.4 տոկոսով, ի հաշիվ մասնավոր ներդրումների 42.1 տոկոս իրական նվազման, որը մեծամասամբ պայմանավորված է շինարարության ճյուղի զգալի կրճատմամբ, իսկ վերջինս կրել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը: Պետական կապիտալ ներդրումները նույն ժամանակահատվածում աճել են շուրջ 10 տոկոսով, պայմանավորված պետության ընդլայնող տնտեսական քաղաքականությամբ:

2010 թվականի առաջին եռանսակի ընթացքում կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ աճել է 8.7 տոկոսով, այդ թվում պետական կապիտալ ներդրումներն աճել են 67.2 տոկոսով, իսկ մասնավոր ներդրումները նվազել են 7.5 տոկոսով: 2010 թվականի յոթ ամիսներին գնահատականներով կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ աճել է շուրջ 6.0 տոկոսով, պետական կապիտալ ներդրումների շուրջ 8.3 տոկոս աճի և մասնավոր ներդրումների շուրջ 10 տոկոս նվազման պայմաններում: Չնայած մասնավոր ներդրումները նվազում են, սակայն տեղի է ունենում նաև կառուցվածքային տեղաշարժ՝ ոչ արտադրողական ներդրումներից դեպի արտադրողական ներդրումների, ինչն էլ ապահովելու է հետագա տարիների տնտեսական աճը:

Կանխատեսում: Մինչև տարեվերջ ՀՆԱ-ի կանխատեսված 2.7 տոկոս աճի պարագայում կունենանք ներդրումների իրական արտահայտությամբ նվազում 4.8 տոկոսի չափով: Ընդ որում պետական ներդրումները կաճեն 2.7 տոկոսով, իսկ մասնավոր ներդրումները կնվազեն 31.1 տոկոսով:

Արտաքին առևտուր: Արտաքին առևտրի ցուցանիշների մասով նշենք, որ 2006-2008 թվականների դրամային ներմուծումն իրական արտահայտությամբ միջին հաշվով աճել է 8 տոկոսով, իսկ արտահանումը կրճատվել է 8 տոկոսով: Սա պայմանավորված է այդ ժամանակահատվածում դրամի իրական արտահայտությամբ արժևորմամբ և բնակչության եկամուտ-

⁴ Կանխատեսման հիմքում դրված է տնային տնտեսությունների սպառման համահարթման տեսության դոկտրինան, որը տարբեր երկրների պատմական թվային շարքերի հիման վրա էմպիրիկ ձևով հիմնավորվել է:

ների շարունակական աճով: 2009 թվականին դրամային արտահայտությամբ արտահանման իրական ծավալները կրճատվել են 11.5 տոկոսով, իսկ ներմուծումը 19.5 տոկոսով: Չնայած ազգային արժույթի արժեզրկմանը, այս ցուցանիշները պայմանավորված են արտահանվող ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի նվազմամբ և փոխարժեքի ազդեցության դրսևորման ժամանակային խզմամբ:

2010 թվականի առաջին յոթ ամիսներին ըստ գնահատականների արտահանումը իրական դրամային արտահայտությամբ աճել է շուրջ 10.2 տոկոսով, իսկ ներմուծումը 6.4 տոկոսով:

Կանխատեսում: 2010 թվականի վերջին իրական արտահայտությամբ կունենանք ներմուծման 3.7 և արտահանման 13.9 տոկոս աճ: 2011 թվականին պայմանավորված համաշխարհային տնտեսության զարգացումներով, ակնկալվում է մեր տնտեսության արտադրանքի նկատմամբ արտաքին պահանջարկի մեծացում և կանխատեսվում է արտահանման ծավալների 13.9 տոկոս և ներմուծման ծավալների 4.4 տոկոս աճ:

Աղյուսակ 3.3.1 ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը,%

	2006	2007	2008	2009	2010	2011
Սպառում	9.0	12.3	4.5	-2.6	4.0	3.5
Ներդրում	32.2	19.7	12.6	-34.4	-4.8	4.2
Արտահանում	-7.3	-3.5	-13.1	-11.5	13.9	13.9
Ներմուծում	3.8	13.0	7.3	-19.5	3.7	4.4
Ընդամենը ՀՆԱ	13.2	13.7	6.9	-14.2	2.7	4.6


Աղյուսակ 3.3.2 Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում

	2006	2007	2008	2009	2010	2011
Սպառում	82.3	81.8	81.8	93.9	95.1	95.4
Ներդրում	35.9	37.8	40.9	33.8	31.2	31.1
Զուտ արտահանում, այդ թվում	-15.9	-20.0	-25.6	-27.9	-27.4	-27.3
Արտահանում ⁵	23.4	19.2	15.0	15.5	18.1	20.4
Ներմուծում ⁶	39.3	39.2	40.7	43.4	45.5	47.6
Վիճ. Շեղում	-2.4	0.4	2.9	0.1	1.1	0.8
Ընդամենը ՀՆԱ	100	100	100	100	100	100

Գծապատկեր 3.3.1 2011 թվականին ՀՆԱ-ի ծախսային կառուցվածքի տեսակարար կշիռները

⁵ Ներառված են նաև ծառայությունները

⁶ Ներառված են նաև ծառայությունները



3.4 Գնային փոփոխականներ

Տնտեսությունում գների մակարդակը բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՍԳԻ) կամ ՀՆԱ դեֆլյատորով: Իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՍԳԻ-ն ցույց է տալիս որոշակի սպառողական ապրանքների (ներառյալ ներմուծված) գամբյուղի գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները


Սպառողական գներ: Վերջին տարիների ընթացքում սպառողական գները հիմնականում կայուն են եղել՝ չգերազանցելով 4 ± 1.5 տոկոս նպատակային միջակայքը: Բացառություն են կազմել 2007 և 2009 թվականները, երբ 2007 թվականին սպառողական գների մակարդակը տարեվերջին կազմել է 6.6 տոկոս՝ պայմանավորված արտաքին շոկերով, մասնավորապես, նավթի և ցորենի միջազգային գների բարձրացմամբ: 2009 թվականին սպառողական գների մակարդակը տարեվերջին կազմել է 6.5 տոկոս: Ընդ որում, 2009 թվականին գնաճը եղել է հիմնականում նպատակային միջակայքում, բացառությամբ դեկտեմբերին, երբ գնաճի տեմպի կտրուկ ավելացում է արձանագրվել՝ պայմանավորվելով գյուղատնտեսական ապրանքների գների առավել ցայտուն սեզոնային աճով:

Գնաճը նպատակային 4%(+1.5%) միջակայքում ձևավորելու համար 2010 թվականի տարեսկզբից Կենտրոնական բանկը շարունակաբար խստացրել է դրամավարկային պայմանները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը առաջին կիսամյակի ընթացքում բարձրացնելով, ընդհանուր առմամբ, 2.25 տոկոսային կետով: Իրականացված քաղաքականության ներքո ձևավորվել են դրական իրական տոկոսադրույքներ: Սակայն 2010 թվականի օգոստոսին պարենային ապրանքների միջազգային շուկաներում և գյուղատնտեսության ոլորտում դրսևորումները գերազանցել են կանխատեսված հնարավոր վատատեսական ռիսկերը, ինչն էլ հիմնականում նպաստել է ամսվա ընթացքում ակնկալվածից բարձր գնաճի ձևավորմանը: Առաջարկի նշված շուկերի արդյունքում 2010 թ. օգոստոսին արձանագրվել է 12-ամսյա գնաճի 9.6 տոկոս մակարդակ, որի միայն 5.9 տոկոսային կետը պայմանավորվել է “Միրգ”, “Բանջարեղեն և կարտոֆիլ” և ”Հացամթերք” ապրանքախմբերի գների աճով:

2010 թվականի օգոստոսին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 5 տոկոս գնաճ, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 6.4 տոկոս (նպաստումը գնաճին՝ 3.5 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 2.7 տոկոս (նպաստումը գնաճին՝ 0.4 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 3.7 տոկոս (նպաստումը գնաճին՝ 1.1 տոկոսային կետ) աճով:

Կանխատեսում: Միջազգային շուկաներում պարենային և ոչ պարենային ապրանքների գների տարեսկզբի համեմատ բարձր աճի և տնտեսական ակտիվության վերականգնման պայմաններում սպասվում է, որ 2010 թվականի ընթացքում կպահպանվի առաջարկի գործոններով պայմանավորված բարձր գնաճային ֆոնը՝ ռիսկեր առաջացնելով գնաճի նպատակային թիրախի ապահովման համար: 2010 թվականին ակնկալվում է, որ 12-ամսյա գնաճը կկազմի շուրջ 6.1 տոկոս: 2011 թվականի գնաճը՝ կապված կենտրոնական բանկի և կառավարության հետ կոորդինացված գործողությունների հետ կլինի նպատակային թիրախի 4 (+/-1.5) տոկոս տատանման թույլատրելի միջակայքում՝ կազմելով շուրջ 5.3 տոկոս:

Գծապատկեր 3.4.1 2000-2011 թթ գնաճի (ՄԳԻ) դինամիկան



ՀՆԱ դեֆլյատոր: ՀՆԱ դեֆլյատորը 2006-2008թթ ընթացքում եղել է կայուն և կանխատեսելի՝ միջին հաշվով կազմելով 104.9 տոկոս: 2009 թվականի տնտեսական ճգնաժամով պայմանավորված դեֆլյատորի մեծությունը վերջին տարիներին արձանագրված ցուցանիշի միջինից զգալիորեն ցածր էր՝ 101.3 տոկոս:

2010 թվականի առաջին յոթ ամիսներին միտումը կտրուկ փոխվել է. դեֆլյատորը կազմել է 109.6 տոկոս՝ պայմանավորված գյուղատնտեսության և արդյունաբերության գների բարձր դեֆլյատորներով: Արդյունաբերության դեֆլյատորը կրում է միջազգային շուկաների (պղնձի և մոլիբդենի մասով), ինչպես նաև գազի գների աճի ազդեցությունը: Իսկ գյուղատնտեսության գների բարձր դեֆլյատորը հիմնականում պայմանավորված էր գյուղատնտեսական ապրանքների տեղական առաջարկի կրճատմամբ:

Կանխատեսում: Մինչև տարեվերջ կանխատեսվում է ՀՆԱ-ի դեֆլյատորի աճի տեմպի նվազում արդեն իսկ արձանագրված ցուցանիշից՝ մինչև 108.9 տոկոս, իսկ 2011 թվականին՝ հաշվի առնելով ներքին գների իներցիոն հակվածությունը՝ դեֆլյատորը կկայունանա կազմելով շուրջ 103.6 տոկոս:

3.5 Ֆինանսական շուկա

Ֆինանսական շուկաները բնութագրվում են մի շարք ցուցանիշների համախմբով: Սակայն, այս բաժնում մենք կուսումնասիրենք հիմնականում երկու ցուցանիշ՝ առաջինը

Ֆինանսական միջնորդության խորությունն է և երկրորդը՝ ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները՝ որպես ֆինանսական միջոցների ձևավորված գին:

Ֆինանսական միջնորդության խորության ցուցանիշը բնութագրում է թե ֆինանսական ինստիտուտները (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) ինչ չափով են ներգրավված տնտեսություն մեջ:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս, թե ինչքան է փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Եթե տոկոսադրույքները բարձր են տրված ռիսկայնության աստիճանի պարագայում, ապա տնտեսությունում առկա է գնաճային ճնշումներ կամ սպասումներ և հակառակը:

Այսինքն, ֆինանսական շուկայում ձևավորվում է փողի առաջարկը, պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար: Այդ տեսանկյունից, ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական կայունության պահպանման տեսանկյունից ունի կարևոր նշանակություն:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Վերջին տարիներին տնտեսական աճի բարձր տեմպերով պայմանավորված փողի զանգվածը շարունակական աճել է. 2006 և 2007 թվականներին աճերը կազմել են համապատասխանաբար 32.9 տոկոս և 42.5 տոկոս: Սակայն, 2008 թվականի վերջին եռամսյակում, տնտեսության աճի տեմպերի դանդաղման և 2009 թվականին արձանագրված 14.2 տնտեսական անկման պարագայում, նկատելի եղավ նաև փողի նկատմամբ պահանջարկի նվազում: Արդյունքում փողի զանգվածի աճի դանդաղում է գրանցվել 2008 և 2009 թվականներին և համապատասխանաբար կազմել է 2.3 և 15.1 տոկոս:

Արդեն 2010 թվականի հուլիսին փողի զանգվածն աճել է 11.7 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ընդ որում բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի նպաստումը եղել է դրական՝ 2.8 տոկոսային կետ, արտարժույթային ավանդներինը՝ 8.1 տոկոսային կետ, իսկ դրամային ավանդներինը ընդամենը՝ 0.7 տոկոսային կետ:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2010 թվականի հուլիսի դրությամբ կազմել են 636 մլրդ դրամ: Նշենք, որ նկատվել է դոլարայնացման տեմպերի նվազում, 2010 թվականի հուլիսի դրությամբ ներգրավված

ավանդների 71.4 տոկոսը կազմել են արտարժույթով ավանդները՝ մարտին արձանագրած 77 տոկոսի փոխարեն:

2010 թվականի տարեսկզբից Կենտրոնական բանկը և ՀՀ կառավարությունը իրականացնում է ապադրվարացման միջոցառումներ: Այդ նպատակով փոփոխություն է մտցվել պարտադիր պահուստավորման մեխանիզմում. ապրիլից արտարժույթով ներգրավված միջոցների 25%-ի դիմաց պարտադիր պահուստավորումը իրականացվում է ազգային դրամով, իսկ սեպտեմբերից՝ այն հասցվել է 50%-ի⁷: Ապադրվարացման միջոցառումներից են նաև արտարժույթով տրամադրվող վարկերի դիմաց հնարավոր կորուստների պահուստների պահանջների խստացումը, կապիտալի համարժեքության հաշվարկում ռեզիդենտներին տրամադրված դրարային վարկերի ռիսկի կշռի մեծացումը:

2006 և 2007 թվականներին ևս փողի բազան աճել էր և կազմել՝ համապատասխանաբար 41.1 և 50.9 տոկոս: 2008 և 2009 թվականների տարեկան արդյունքներով փողի բազայի աճերը կազմել են համապատասխանաբար 5.3 և 13.8 տոկոս:

2010 թվականի հուլիսին փողի բազան նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 0.2 տոկոսով, ընդ որում ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվներում ավելցուկային միջոցների և պարտադիր պահուստների նպաստումը եղել է բացասական՝ 5.9 տոկոսային կետ, իսկ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի նպաստումը դրական՝ 6.7 տոկոսային կետ: Կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 6.5 տոկոսային կետով՝ կազմելով 70.7 տոկոս:

Աղյուսակ 3.5.1 Բանկային ակտիվներ/ՀՆԱ 2007 թվականից 2010 թվականի հուլիս ամիսը

(մլրդ. դրամով)	2007	2008	2009	2010						
				առ 01.01.10	առ 01.02.10	առ 01.03.10	առ 01.04.10	առ 01.05.10	առ 01.06.10	առ 01.07.10
ՀՆԱ անվանական	3149.3	3568.2	3102.8	149.5	321.7	555.5	777.6	1016.8	1338.9	1586.5
Վարկեր	426.2	634.5	735.2	725.2	743.2	780	768.2	779.9	797.9	812.8

⁷ Ապադրվարացման գործընթացի տարր է նաև ԿԲ կողմից բանկերի արտարժույթային դիրքերի նորմատիվի փոփոխությունը. յուրաքանչյուր արտարժույթի համախառն դիրքերի բացարձակ հանրագումարը չպետք է գերազանցի նորմատիվային ընդհանուր կապիտալի 7%-ը, իսկ բոլոր արտարժույթների համախառն դիրքերի բացարձակ հանրագումարը՝ 10%-ը:

Վարկերի կշիռը ՀՆԱ-ում % ⁸	13.5	17.8	23.7	-	-	-	-	-	-	-
Ավանդներ	413.2	465.9	657	649.5	664.4	694.1	661.8	639.8	627.7	636
Ավանդների կշիռը ՀՆԱ-ում %	13.1	13.1	21.2	-	-	-	-	-	-	-

Առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2010 թվականի հուլիսին կազմել են 18.32 տոկոս՝ 2009 թվականի հուլիսի 18.54 տոկոսի դիմաց: Նույն ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2009 թվականի հուլիսին ավանդների տոկոսադրույքը կազմել է 9.11 տոկոս, ապա 2010 հուլիսին այն աճել է 0.42 տոկոսային կետով՝ կազմելով 9.53 տոկոս:

Աղյուսակ 3.5.2 Ֆինանսական շուկայի 2007-2010թթ առանձին ամիսների միջին տոկոսադրույքները

%	2007		2008		2009		2010						
	հուլիս	դեկտեմբեր	հուլիս	դեկտեմբեր	հուլիս	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	Հունիս	հուլիս
Վարկեր ⁹	17.87	16.45	16.8	16.5	18.54	18.79	19.07	19.88	19.10	19.94	20.02	18.66	18.32
Ավանդներ	6.83	6.13	6.23	7.71	9.11	8.10	7.79	8.56	8.54	9.08	9.73	9.17	9.53

Կանխատեսում: Հաշվի առնելով, որ 2009 թվականին իրականացվել էր ընդլայնող դրամավարկային քաղաքականություն, արդեն 2010 թվականի շրջահայաց դրամավարկային քաղաքականության ներքո ակնկալվում է, որ դրամավարկային ցուցանիշներն առավել զուսպ աճի տեմպեր կունենան: 2010 թվականին փողի բազայի աճը կկազմի մոտ -0.1 տոկոս, իսկ փողի զանգվածի աճը՝ 3 տոկոս: 2011 թվականին փողի բազայի և փողի զանգվածի աճերը կկազմեն համապատասխանաբար 9.7 և 10.2 տոկոս՝ նախանշելով նաև տնտեսության փողայնացման ցուցանիշի աճի վարքագիծը:

3.6 Վճարային հաշվեկշիռ

⁸ Ցուցանիշների համադրելիությունը ապահովելու տեսանկյունից վարկերը պետք է դիտարկել տարեկան ՀՆԱ-ի մեջ:

⁹ Հաշվարկված է 16 օրից մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

- ընթացիկ հաշիվ (ցույց է տալիս ոչ ռեզիդենտների հետ իրականացվող իրական գործարքները՝ ներմուծում, արտահանում, տրանսֆերտներ և գործոնային եկամուտներ)
- կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական բնույթի գործարքները (կապիտալի ներհոսքն ու արտահոսքը))

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է: Դրա հետ մեկտեղ փոքր բաց տնտեսություններին հատկանշական է բարձր զգայնությունը համաշխարհային տնտեսության զարգացումներից (միջազգային բորսաներում գնանշվող ապրանքների գներ, գործընկեր երկրների տնտեսական զարգացում, համաշխարհային տնտեսության զարգացման միտում և այլն) :

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

2006-2008 թվականներին իրականացված տնտեսական և արժույթային քաղաքականությունների արդյունքում ընթացիկ հաշվի հիմնական ցուցանիշների մասով տեղի է ունեցել զգալի բարելավում, եթե 2000 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել էր ՀՆԱ-ի 14.6 տոկոսը, ապա 2007 թվականին այն հասել է 6.4 տոկոսի: Սակայն, սկսած 2008 թվականի 4-րդ եռամսյակից, տնտեսությունը կրեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումները՝ կրճատվեցին Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործոնային եկամուտները, կրճատվեց նաև հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը: 2009 թվականին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կրճատվել է 26.5 տոկոսով՝ արտահա-

նումը նվազել է 32.7 տոկոսով՝ կազմելով 748.9 մլն դոլար¹⁰, իսկ ներմուծումը նվազել է 25.0 տոկոսով՝ կազմելով 2830.1 մլն դոլար¹¹: Ներմուծման նվազումը, որը տեղի է ունեցել առաջին անգամ վերջին 8 տարիների ընթացքում (2002 թվականից սկսած), հիմնականում պայմանավորված էր բնակչության տնօրինվող եկամուտների նվազմամբ, և մասամբ՝ 2009 թվականի մարտին տեղի ունեցած փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: Առյուսակ 7-ում ներկայացված են արտաքին հատվածի հիմնական ցուցանիշների միտումները և սպասումները (տե՛ս նաև Գծապատկեր 7-ը):

2010 թվականին, պայմանավորված համաշխարհային, ինչպես նաև ՀՀ տնտեսության վերականգնմամբ, արտաքին առևտրի ցուցանիշները բարելավվել են՝ դրսևորելով աճի միտումներ: Այսպես՝ ընթացիկ տարվա հունվար-հուլիսին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 26.5 տոկոսով: Ընթացիկ տարվա յոթ ամիսներին նախորդ տարվա հունվար-հուլիսի համեմատ արտահանման և ներմուծման ծավալներն աճել են. արտահանումն աճել է 43.3 տոկոսով՝ կազմելով 512.7 մլն դոլար, իսկ ներմուծումը աճել է 22.8 տոկոսով՝ կազմելով 2036.1 մլն դոլար: Արտահանման ցուցանիշի բարելավման վրա դրական ազդեցություն է ունեցել նաև կառավարության կողմից վարվող՝ արտահանողներին ֆինանսական և ոչ ֆինանսական օժանդակության քաղաքականությունը:

2010 թվականի հունվար-հուլիսին արտահանման 43.3 տոկոս աճի ամենաբարձր՝ 19.0 տոկոսային կետը պայմանավորված է “Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր” ապրանքախմբի արտահանման ավելացմամբ, որը կազմել է 58.6 տոկոս: Արտահանման աճի 18.3 տոկոսային կետը պայմանավորվել է “Հանքահումքային արտադրանք”, 7.0 տոկոսային կետը՝ “Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր” և 2.7 տոկոսային կետը՝ “Պատրաստի սննդի արտադրանք” ապրանքախմբերի ծավալների աճով, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 98.3, 46.5 և 21.5 տոկոս:

Հունվար-հուլիսին ընդհանուր ներմուծման 22.8 տոկոս աճի ամենաբարձր 5.2 և 3.7 տոկոսային կետերը պայմանավորված են “Հանքահումքային արտադրանք” և “Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ” ապրանքախմբերի ներմուծման ավելացմամբ, որը կազմել է համապատասխանաբար 32.5 և 21.1 տոկոս:

¹⁰ ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրատարակված վճարային հաշվեկշռի տվյալները՝ ՖՕԲ գներով:

¹¹ ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրատարակված վճարային հաշվեկշռի տվյալները՝ ՖՕԲ գներով:

2010 թվականի հունվար-հուլիսին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ գներով) կազմել է 1209.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 156.7 մլն ԱՄՆ դոլարով կամ 14.9 տոկոսով և կազմելով ՀՆԱ-ի 25.3 տոկոսը՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 26 տոկոսի դիմաց:

Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2010 թվականի հունվար-հուլիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 27.7 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ և 32.0 տոկոսը՝ ԵՄ երկրներին, 2009 թվականի համապատասխան ժամանակահատվածի ընթացքում նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 29.3 և 30.8 տոկոս: ԵՄ երկրների ապրանքաշրջանառության աճը 2010 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ կազմել է 31.7 տոկոս, իսկ ԱՊՀ երկրների՝ 19.6 տոկոս: ՀՀ խոշոր առևտրային գործընկերերի շրջանակում ընդգրկվել են Չինաստանը (առևտրաշրջանառության 9.5%), Գերմանիան (7.5%-ը), Բուլղարիան (5.6%), ԱՄՆ-ն (4.6%), Իրանը (4.4%), Թուրքիան (4.2%), Բելգիան (3.7%), Վրաստանը (2.8%), Իտալիան (2.6%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (20.3%), Ուկրաինան (5.2%), Բելառուսը (0.8%): Վերջիններին բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև տարվա ընթացքում կատարված ապրանքաշրջանառության 94.8 տոկոսը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Փոխարժեք: Նախորդ տարիներին ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման միտումները 2009 թվականի տարեսկզբից դադարել են: Մասնավորապես՝ եթե 2008 թվականի դեկտեմբեր ամսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել էր 307.8 դրամ, ապա 2009 թվականի դեկտեմբերին այն կազմել է 380.47 դրամ՝ տարվա ընթացքում միջին հաշվով արժեզրկվելով 19.1 տոկոսով: Ըստ էության փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորված է եղել համաշխարհային ճգնաժամի հետևանքով արտարժույթի ներհոսքի կտրուկ կրճատմամբ, որի արդյունքում տեղի է ունեցել հավասարակշիռ փոխարժեքի վարքագիծը պայմանավորող մակրոտնտեսական հիմնարարներից մեկի՝ ֆինանսական ներհոսքի վարքագծի փոփոխություն և փոխարժեքը ճշգրտվել է: Տարվա միջին փոխարժեքը կազմել է 363.28 դրամ ԱՄՆ դոլարի դիմաց (2008-ին՝ 305.97): Նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է ԱՄՆ դոլարի համեմատ դրամի անվանական

արժեքի 15.8 տոկոս արժեզրկում՝ 2008 թվականի համապատասխան ցուցանիշի զգալի արժևորման դիմաց (11.8 տոկոս):

2010 թվականի ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը գրեթե եղել է կայուն՝ մինչև սեպտեմբեր ամիսը դրսևորելով սեզոնային արժեզրկման և արժևորման վարքագծեր: 2010 թվականի առաջին եռամսյակի միջին փոխարժեքը կազմել է 384.08 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ արժեզրկվել է 15.2 տոկոսով: Միևնույն ժամանակ առաջին կիսամյակում դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը կազմել է՝ 384.20 (2009-ին՝ 348.04). և նախորդ տարվա համապատասխան միջին ցուցանիշի նկատմամբ արժեզրկվել է 9.4 տոկոսով, իսկ առաջին 7 ամիսների արդյունքներով արժեզրկումը կազմել է 8.9 տոկոս (381.71 դրամ 2009-ի 350.51 դրամի 1 ԱՄՆ դոլարի դիմաց):

ՀՀ ազգային արժույթը ոչ միայն դոլարի, այլ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած “զամբյուղի” նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք¹²) ընթացիկ տարվա առաջին կիսամյակում նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է 11.7 տոկոսով, ինչը նշանակում է, որ վերոնշյալ “զամբյուղում” ընդգրկված մնացած երկրների արժույթները դրամի նկատմամբ ավելի շատ են արժևորվել: Հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով՝ իրական արդյունավետ փոխարժեքի միջին արժեզրկումը տարվա առաջին կիսամյակի ընթացքում կազմել է 8.9 տոկոս¹³, ինչն իր դրական ազդեցությունն է թողնում երկրի ընթացիկ հաշվի վրա:

Կանխատեսում: 2010 թվականին մինչև տարեվերջ ակնկալվում է, որ Հայաստանի տնտեսության արտաքին հատվածում կշարունակեն տեղի ունենալ դրական փոփոխություններ՝ ի դեմս վերականգնվող արտաքին առևտրաշրջանառության, ինչը հիմնականում պայմանավորված կլինի Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության աշխուժացմամբ և համաշխարհային տնտեսության վերականգնմամբ: Այսպես՝ 2010 թվականին մինչև տարեվերջ կանխատեսվում է առնվազն 30 տոկոս դոլարային արտա-

¹² Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժընթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարևոր արժույթներից բաղկացած “զամբյուղի” նկատմամբ: Ընդ որում, հաշվարկներում զամբյուղը կազմող արժույթները նախ բերվում են դոլարային արտահայտության, որից հետո ճշգրտվում են ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքով, այսինքն՝ հաշվարկվում է դրամի կրոս կուրսը՝ յուրաքանչյուր տարադրամի 1 միավորի դիմաց (դրամի անուղղակի գնանշում):

¹³ Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2010թ.օգոստոսի 31-ի դրությամբ տվյալները:

հայտությամբ արտահանման աճ, 13.7 տոկոս ներմուծման աճի պարագայում: 2011 թվականին ակնկալվում է, որ համաշխարհային տնտեսական աճի ընդլայնմանը ինչպես նաև կառավարության տնտեսության արտահանելի հատվածում ներդրումների խրախուսման քաղաքականությանը համահունչ, արտահանման բարձր աճը կպահպանվի և ապրանքների արտահանման ծավալները կկազմեն տարեկան շուրջ 1139 մլն ԱՄՆ դոլար (ՖՕԲ)՝ տարեկան 17.0 տոկոս աճի պայմաններում (դոլարային արտահայտությամբ): Նույն ցուցանիշը ապրանքների և ծառայությունների համար կկազմի շուրջ 14.2 տոկոս (1865 մլն ԱՄՆ դոլար):


2010 թվականին ակնկալվում է 13.7 տոկոս ապրանքների ներմուծման աճ: 2011 թվականի ապրանքների ներմուծման տարեկան աճը կդանդաղի (դոլարային արտահայտությամբ) և կկազմի 6.1 տոկոս: Նույն ցուցանիշը կգրանցվի նաև ապրանքների և ծառայությունների ներմուծման համար՝ 6.1 տոկոս:

2010 թվականին ակնկալվում է ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի պակասուրդի 14.8 տոկոս (առանց պաշտոնական տրանսֆերտների՝ 16 տոկոս) մակարդակ, իսկ 2011 թվականին այն կկազմի 13.1 տոկոս (առանց պաշտոնական տրանսֆերտների՝ 14.6 տոկոս):

Աղյուսակ 3.6.1. Վճարային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ %)

	2007	2008	2009	2010	2011
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-6.4	-11.8	-16.0	-14.8	-13.1
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների)/ՀՆԱ	-7.4	-12.5	-17.0	-16.0	-14.6
Այդ թվում՝ եկամուտներ ուղղակի ներդրումներից/ՀՆԱ	-3.6	-2.4	-3.9	-2.4	-2.4
Ուղղակի ներդրումներ/ՀՆԱ	7.6	7.9	8.5	7.6	7.7

Գծապատկեր 3.6.1 Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ, 2000-2011թթ.



3.7 Պետական հատված

Պետական հատվածի դիրքը տնտեսությունում կարևորվում է որպես համախառն պահանջարկի և համախառն առաջարկի վրա ազդող գործոն: Համախառն պահանջարկի վրա այն ազդում է աշխատավարձերի և ապրանքների ու ծառայությունների վրա կատարվող ծախսերի միջոցով, իսկ համախառն առաջարկի վրա՝ տնտեսության ենթակառուցվածքներին ուղղվող, ինչպես նաև տնտեսավարողներին տրվող ֆինանսական օժանդակությունների գծով կատարված ծախսերի տեսքով, որոնք նպաստում են աշխատատեղերի պահպանմանը և թողարկումների ընդլայնմանը: Պետական հատվածի չափման հիմնական ցուցանիշներն են համարվում ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշները: Այս բաժնում կներկայացվի նաև ամբողջական պահանջարկի և առաջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության բնույթը նկարագրող հարկաբյուջետային ազդակը:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները


2007-2009 թվականներին պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են միջինում 21.6 տոկոսը՝ դրսևորելով շարունակական աճի միտումներ: 2010 թվականի յոթ ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 27.7 տոկոսը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 25.3 տոկոսի դիմաց, իսկ հարկային եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 21.4 տոկոսը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 19.7 տոկոսի

դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գծով անվանական աճը կազմել է 22.2 տոկոս, իսկ հարկային եկամուտների հավաքագրման առումով՝ 21.6 տոկոս: Եթե համադրելու լինենք անվանական ՀՆԱ-ի 2010 թվականի հուլիսի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արձանագրված 14 տոկոս աճը, ապա պարզ կդառնա, որ հարկային եկամուտների հավաքագրման առումով ներկայացված ցուցանիշի աճը գերազանցում է ՀՆԱ-ի ցուցանիշը: Ընդ որում, նշված ժամանակահատվածում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ բարելավվել է 1.8 տոկոսային կետով և կազմել է 21.4 տոկոս:

2010 թվականի հունվար-հուլիս ամիսներն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի ընդհանուր ծախսերը անվանական արտահայտությամբ աճել են 8.7 տոկոսով, իսկ ընթացիկ ծախսերը՝ 8.5 տոկոսով, մինչև նույն ժամանակ պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը դրսևորել է նվազման միտումներ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 0.9 տոկոսային կետի չափով, որը գերազանցապես բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին: Կապիտալ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը պահպանվել է նախորդ տարվա ցուցանիշի մակարդակին:

2007-2009 թվականներին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ընդհանուր պահանջարկի վրա ունեցել է զսպող ազդեցություն բացառությամբ 2009 թվականին: Ընդ որում, 2007 թվականից հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությունը աճել է և 2008 թվականին հարկաբյուջետային ազդակը կազմել է -2.8 տոկոս, իսկ 2009 թվականին ՀՀ կառավարության իրականացրած հակաճգնաժամային գործողությունների արդյունքում այն եղել է հնարավորինս ընդլայնող, որն արտացոլվել է հարկաբյուջետային ընդլայնող ազդակի բարձր՝ 12.3 տոկոս ցուցանիշով:

Գծապատկեր 3.7.1 Հարկաբյուջետային ազդակը 2006-2011թթ.



Կանխատեսում: 2010 և հետագա տարիների համար, հաշվի առնելով ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշի բարձր մակարդակի նվազեցման անհրաժեշտությունը, որը հանգեցնում է պետական բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատման անհրաժեշտության, հարկաբյուջետային քաղաքականությունը նպատակաուղղված կլինի ամբողջական պահանջարկի վրա 2010 թվականին զսպող իսկ արդեն 2011 թվականին չեզոք ազդեցության ապահովմանը, ինչի արդյունքում հնարավոր կլինի սահուն վերադառնալ կայուն տնտեսական զարգացման իրավիճակի:

3.8 Կանխատեսումների արդյունքում կատարված ենթադրություններ և ռիսկեր

3.8.1 Ենթադրությունները, որոնք ընկած են տնտեսական կանխատեսումների հիմքում

- Հայաստանը, համարվելով փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, շատ արագ արձագանքեց համաշխարհային տնտեսական զարգացումներին: Դրանով էլ պայմանավորված ենթադրվում է, որ համաշխարհային տնտեսական զարգացումներին համապատասխան (ԱՄՀ-ի Համաշխարհային Տնտեսական Հեռանկարներ պարբերականով Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում Ռուսաստան, ԱՄՆ, Եվրոպա գրանցվելու է տնտեսությունների վերականգնում և զարգացում) 2011 թվականից տնտեսությունների գլոբալ վերականգնումը կշարունակվի և տնտեսական զարգացումները կարագանան:

- Գործընկեր երկրներում տնտեսական աճի տեմպերի աստիճանական վերականգնումը, հետևաբար և եկամուտների աճը, մի կողմից կուղեկցվի դեպի Հայաստան մասնավոր տրանսֆերտների հետագա վերականգմամբ, որն էլ մեր տնտեսությունում կբարձրացնի հասարակության գնողունակությունը, մյուս կողմից կընդլայնի հայկական ապրանքների նկատման պահանջարկը:

- Համաշխարհային շուկաներում ակնկալվում է, որ հումքային ապրանքների գները կկայունան արդեն իսկ արձանագրված միտումներին համապատասխան:

- Ներքին տնտեսությունում, 2009-2010 թվականների կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ներքո տնտեսություն ներարկված մեծածավալ միջոցները և տնտեսական դաշտում տնտեսվարող սուբյեկտների գործունեության հեշտացմանը և պարզեցմանն ուղղված բազմաթիվ միջոցառումները լազային էֆֆեկտով (որոշ ժամանակ հետո) դրական ազդեցություն կունենան տնտեսական դաշտի աշխուժացման վրա: Ակնկալվում է, որ 2011 թվականի տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ են լինելու արդյունաբերությունը և ծառայությունների ոլորտը:

- Արտաքին միջավայրի՝ մասնավորապես, Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության վերականգման տեմպերով և ներքին պահանջարկի ցածր մակարդակով պայմանավորված՝ արտահանման աճը կլինի առաջանցիկ ներմուծման աճի նկատմամբ, որով էլ կպայմանավորվի 2011 թվականի արտաքին առևտրի զարգացումները՝ բարելավելով ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը:

- Հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է լինելու առանց հարկային բեռի բարձրացման հարկային մուտքերի ավելացմանը (վարչարարության հաշվին), իսկ ծախսային մասով գերակայություն է շարունակելու մնալ սոցիալական ծախսերի մակարդակի պահպանումը:

3.8.2 Կանխատեսումներում առկա ռիսկերը

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են ուղղված լինել ինչպես տնտեսական աճի բարձրացմանը, այնպես էլ՝ անկմանը:

Միաժամանակ, Հայաստանը լինելով փոքր և բաց տնտեսություն արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին: Այդ կապակցությամբ հիմնական

կանխատեսումների ռիսկերը մեծապես պայմանավորված կլինեն համաշխարհային տնտեսության մակրոտնտեսական փոփոխություններով:

ա) ՀՆԱ-ի կանխատեսվածից բարձր աճին նպաստող ռիսկեր.

Արտաքին միջավայր

- Եթե համաշխարհային տնտեսությունը զարգանա միջազգային հեղինակավոր կանխատեսող կազմակերպությունների կանխատեսումներից ավելի արագ տեմպերով, ապա կանխատեսված աճը կլինի ավելի բարձր: Այս իրավիճակի դրսևորումն ավելի հավանական կլինի, եթե Ռուսաստանի տնտեսությունը զարգանա ավելի արագ տեմպերով, քան ակնկալվում է:

- Աճի ուղղությամբ հաջորդ ռիսկը կապված է միջազգային գների՝ ակնկալվածից ավելի արագ աճի հետ, որի դրսևորման պարագայում այն մեր երկրի ՀՆԱ-ի աճի՝ կանխատեսվածից ավելի բարձր ցուցանիշի գրանցմանը կնպաստի 2 ճանապարհով, դրանք են ուղղակի՝ հումքի արտահանմամբ պայմանավորված արտադրության ծավալների աճի միջոցով և անուղղակի՝ Ռուսաստանից ստացվելիք մասնավոր տրանսֆերտների աճի միջոցով:

Ներքին միջավայր.

- Կանխատեսումների սցենարում ենթադրություն է դրված, որ կառավարությունը պետք է իրականացնի տնտեսական բարեփոխումներ՝ հատկապես գործարար միջավայրի և հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ, սակայն եթե կառավարության բարեփոխումների ազդեցությունը տնտեսավարողների սպասումների վրա լինի ավելի արագ, քան ակնկալվում է, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:

- Հնարավոր է, որ ներմուծված ներդրումային բնույթի ապրանքները (հիմնականում արտադրական հոսքագծերը), որի նկատմամբ կառավարությունը խրախուսման քաղաքականություն է վարում ի դեմս հետաձգվող ԱԱՀ-ի, մինչև տարեվերջ կանխատեսվածից ավելի բարձր լինեն, ինչպես նաև նշյալ արտադրական հոսքագծերը 2011թ-ի ընթացքում ավելի շուտ գործարկվեն քան ակնկալվում է: Նման իրավիճակում ներդրումային նշյալ ապրանքներ

ստացող ճյուղի արտադրողականության աճը` հետևաբար ճյուղային ՀՆԱ-ի աճն ավելի բարձր կլինի, քան ակնկալվում է:

- 2011թ-ին ներդրվելու է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգը, ինչը ֆինանսական շուկայի համար հնարավորություն կտա ֆինանսական միջոցները համալրել մոտ 40 մլրդ դրամ երկար փողերով, վերջիններս նշանակալից կազդեն տոկոսադրույքների վրա նվազման ուղղությամբ: Այս պարագայում կմեծանա ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը և եթե տարվա առաջին կեսում նշվածով պայմանավորված մասնավոր ներդրումների ծավալները կտրուկ աճեն, ապա հնարավոր է տարվա երկրորդ կեսին տնտեսական զարգացումները լինեն ակնկալվածից բարձր:

բ) ՀՆԱ-ի աճի կանխատեսումը նվազեցնող ռիսկեր

Արտաքին միջավայր

- Եթե Եվրոպական երկրներում հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում իրականացված ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականությամբ պայմանավորված պետական պարտավորությունների կատարման անհնարինությունը խորանա, կարող է հանգեցնել ֆինանսական անկայունության եվրոպական շուկաներում: Վերջինս կարող է նորից վարակի էֆֆեկտով անդրադառնալ այլ տարածաշրջանների շուկաների վրա, հանգեցնել հումքային ապրանքների գների դեպի ներքև ճշգրտման և դանդաղեցնել ինչպես Եվրոպական տնտեսության այնպես էլ, նշյալ տարածաշրջանի հետ բարձր ինտեգրված այլ երկրների տնտեսական վերականգնման տեմպերի դանդաղման: Նման իրավիճակում Հայաստանի տնտեսությունը կարող է բացասաբար ազդվել երեք ուղղիներով` հումքային ապրանքների գների դեպի ներքև ճշգրտում, Եվրոպական տարածաշրջանի, ինչպես նաև նշյալ իրավիճակից ազդված այլ երկրների պահանջարկի նվազում, տրանսֆերտների (հիմնականում ՌԴ տնտեսության բացասական ազդեցությամբ պայմանավորված) աճի տեմպերի դանդաղում:

Ներքին միջավայր

- Եթե հաջորդ տարին ևս առանձնանա անբարենպաստ բնակլիմայական պայմաններով և դրա հետևանքով արձանագրվի գյուղատնտեսության ոլորտի աճի տեմպի կանխատեսվածից

ցածր մակարդակ, ապա դա իր բացասական ազդեցությունը կունենա տնտեսության մյուս ճյուղերի զարգացման, հետևաբար երկրի տնտեսական աճի վրա:

• Կառավարությունը պետք է շարունակական իրականացնի տնտեսական բարեփոխումներ՝ հատկապես գործարար միջավայրի և հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ սակայն էթե կառավարության բարեփոխումների արդյունքների նկատմամբ տնտեսվարողների սպասումները լինեն ավելի վատատեսական, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի ցածր:

Հավելված. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011
	փաստ.	փաստ.	փաստ.	Ծրագիր	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	3149.3	3568.2	3102.8	3470.3	3763.5
Իրական ՀՆԱ ինդեքս	113.7	106.9	85.8	102.7	104.6
ՀՆԱ դեֆլյատոր	104.2	105.9	101.3	108.9	103.6
Սպառողական գների ինդեքս (ժամկետի վերջ)	106.6	105.2	106.5	106.1	105.3
Գնաձ (ժամանակաշրջանի վերջ) %	6.6	5.2	6.5	6.1	5.3
Գնաձ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) %	4.4	9.0	3.4	7.6	5.7
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների՝					
ՀՆԱ	13.7	6.9	-14.2	2.7	4.6
Արդյունաբերություն	2.8	2.1	-7.9	6.6	4.6
Գյուղատնտեսություն	10.4	3.3	-0.1	-14.0	10.0
Շինարարություն	18.2	11.3	-42.3	1.7	2.0
Ծառայություններ	12.5	4.8	-0.1	4.0	3.9
Զուտ հարկեր	35.9	17.1	-20.7	20.0	4.0
ՀՆԱ ծախսային կոմպոնենտների իրական աճերը					
Վերջնական սպառում	12.3	4.5	-2.6	4.0	3.5
Պետական	5.2	-1.9	-4.9	0.6	0.4
Մասնավոր	13.2	5.4	-2.3	4.5	4.2
Կապիտալի համախառն կուտակում	19.7	12.6	-34.4	-4.8	4.2
Պետական	77.1	-16.9	10.0	-31.1	-3.1
Մասնավոր	11.8	12.3	-42.1	2.7	5.6
Ապրանքների և ծառայությունների արտահանում	-3.5	-13.1	-11.5	13.9	13.9
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	13.0	7.3	-19.5	3.7	4.4
Արտաքին հատված					

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011
	փաստ.	փաստ.	փաստ.	Ծրագիր	կանխ.
Մլն. ԱՄՆ դոլար					
Ապրանքների և ծառայությունների արտահանում	1777	1757	1338	1634	1865
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-3589	-4748	-3688	-4114	-4364
Ապրանքների արտահանում	1197	1112	749	974	1139
Ապրանքների ներմուծում	-2797	-3776	-2830	-3218	-3414
Ապրանքների արտահանման աճ, %	16.7	-7.1	-32.7	30.0	17.0
Ապրանքների ներմուծման աճ, %	45.6	35.0	-25.0	13.7	6.1
Ընթացիկ հաշիվ	-589	-1382	-1369	-1335	-1203
Կապիտալի և ֆինանսական հաշիվ	1142	1147	1546	1061	1298
Արտաքին պարտք	1449	1577	2967	3618	3849
ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս					
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-19.7	-25.6	-27.5	-27.4	-27.3
Ապրանքների և ծառայությունների արտահանում	19.3	15.1	15.7	18.1	20.4
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	39.0	40.7	43.2	45.5	47.6
Առևտրային հաշիվ	-17.4	-22.8	-24.4	-24.8	-24.8
Ընթացիկ հաշիվ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)	-6.4	-11.8	-16.0	-14.8	-13.1
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների)	-7.4	-12.5	-17.0	-16.0	-14.6
Արտաքին պարտք	15.7	13.5	34.7	40.0	42.0
Ներմուծման ծածկույթը (ամիսներով)	5.5	3.6	6.5	5.5	5.5
Դրամավարկային հատված¹⁴					
Փողի զանգվածի աճ % (M2X ժամ. վերջ)	42.5	2.3	15.1	3.0	10.2
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն (ՀՆԱ/M2X միջին)	5.3	5.1	3.9	4.4	4.3
Փողի բազմարկիչ (M2X)	1.7	1.6	1.6	1.7	1.7
Դրամային զանգվածի աճ % (M2 ժամ. վերջ)	64.1	-4.2	-16.2	4.2	11.2
Դրամային զանգվածի շրջապտույտի արագություն (ՀՆԱ/M2 միջին)	7.0	6.5	7.2	7.5	7.6
Դրամային բազմարկիչ (M2)	1.3	1.3	1.2	1.3	1.3
Փողի բազա, % (ժամ. վերջ)	50.9	5.3	13.8	-0.1	9.7

¹⁴ 2007-2009 թվականների համար դրամավարկային հատվածի ցուցանիշների միջինները հաշվարկված են եռամսյակային տվյալներով, իսկ 2010 և 2011 թվականների համար դրամավարկային հատվածի ցուցանիշները կանխատեսվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և միջինները հաշվարկվել են տարեկան տեղեկատվության հիման վրա: